

Սպառողների Ասոցիացիա

Գործողություններ ուղղված  
քաղաքային տրանսպորտի  
բացասական ազդեցության  
նվազեցմանը








ՀԱՅՏՈՒԼՈՒՐ



**Սպառողների Ասոցիացիա**  
**Տրանսպորտային հոսքերի վերլուծություն**  
**01.06.2007-05.03.2010թ.**



- ◆ Միկրոավտոբուս
- Բոգրան
- ▲ Չինական
- × Ավտոբուսներ և տրոլեյբուսներ

Վերլուծությունը կատարվել է Մաշտոց, Բաղրամյան, Կոմիտաս, Խանջյան, Տերյան, Տիգրան Մեծ, Ազատություն, Սեբաստիա, Լենինգրադյան և այլ փողոցներում

Նկար 1 Խցանում Արվյան ու Կորյունի փող. խաչներուկում: Մեր երթևեկության մոտալուտ ապագան.

Նկար 2 Խցանում Կիելյան, Վաղրամյան փող.խաչներուկում.

Նկար 3 “Գազել”-ների նոր խմբաքանակ

Երևանը շնչահեղձ է լինում տրանսպորտային միջոցների գերժանրաբերմված ու անկառավարելի երթևեկություներից:

Այս ամենին ամեն տարի ավելանում է ՀՀ ներկրվող օգտացործված ավտոմեքենաների մեծ խմբաքանակ:

Այն ունի նյութական, ֆինանսական, սոցիալական և ամենակարևորը՝ բնապահպանական ու արժանապատվության խնդիրներ:

Տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ոչնչացված է արդյունաբերությունը / Նաիրիտ, Պոլիվինիլացետատ, Ավտոդողերի, Կաբելային և այլ գործարաններ/: Արտանետումների հիմնական պատճառը պայմանավորված է հիմնականում քաղաքային տրանսպորտի գործունեությամբ:

Ըստ պաշտոնական և գիտական վիճագրական տվյալների տրանսպորտի արտանետումների տեսակարար կշիռը կազմում է մոտ 93 տոկոս:

Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ գոյություն ունեն լուրջ խնդիրներ, որոնք սպառնում է կաթվածահար անել քաղաքի երթևեկը:

“ՍԱ”-ի իրականացվող ծրագիրը ներկայացնում է այն անհրաժեշտ քայլերը, որոնք դրական ազդեցություն կունենան մեղմելու տրանսպորտի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Հայտնի է, որ 2005թ. ընդունված Երևանի գլխավոր հատակագծում ընդհանուր հասարակական փոխադրամիջոցների ընդհանուր թվում միկրոավտոբուսների տեսակարար կշիռը պետք է կազմի 19.2 տոկոս:

“ՍԱ”-ի երկարամյա անկախ ու անկոխմնակալ ուսումնասիրությունները ակնհայտորեն ցույց են տալիս, որ նշված ցուցանիշի ներկայումս կազմում է մոտ 88 տոկոս և վերջին երեք տարում նվազել է ընդամենը 2 տոկոսով:

Ծրագրի նպատակն է՝ հասարակության, ՋԼՄ-ների, գիտական ուժերի համախմբմամբ իշխանություններին հորդորել գործուն քայլեր ձեռնարկելու՝ միկրոավտոբուսների ուռճացված քանակը /մոտ 3200 հ./ փոխարինել էկոլոգիապես և տնտեսապես ավելի մեծ տարողությամբ շարժակազմով / ավտոբուս, տրոլեյբուս, մետրո/, ինչպես նաև ազդելու քաղաքային ու հանրապետական իշխանությունների վրա, որի արդյունքում կնվազի տրանսպորտային արտանետումների քանակը: Այս գործողությունների կիրառման դեպքում կնվազեն առկա

կոռուպցիոն ռիսկերը:





Նշված նպատակները իրագործելու համար նախատեսվում է կատարել  
հետևյալ գործողությունները՝

- տրանսպորտային հոսքերի գրանցում և մոնիտորինգ
  - քննարկումներ, կլոր սեղաններ
- վերլուծություն և արդյունքների ներկայացում
  - օրենսդրական առաջարկներ
  - բուկլետի տպագրություն



## Օրագրի ենթադրվող արդյունքներն հետևյալն են

- համայնքային կառույցների դերի բարձրացում
- տրանսպորտային միավորների կրճատում/ միկրոավտոբուսներ/,  
փոխարինում մեծ տարողությամբ միավորներով/ ավտոբուս,  
տրոլեյբուս/
- քաղաքային տրանսպորտի արտանետումների քանակի նվազեցում
- արդյունավետ համագործակցություն պետական և հասարակական  
կազմակերպությունների հետ.
  - հանրության իրազեկման բարձրացում
  - օրենսդրական դաշտի բարելավում
  - կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

# ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Հասցեն՝ ք. Երևան 0019,  
Բաղրամյան 24Դ, 9-րդ հարկ,  
902 սենյակ

Հեռ./Ֆաքս 56 11 47

E-mail: [biosfera@mail.ru](mailto:biosfera@mail.ru)





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՐ